«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

12 նոյեմբերի, 2026 թ. N 70 - Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ «ԵՐԵՎԱՆ ԱՈՒԴԻՏ ԿՈՆՍԱԼՏ» ՓԲԸ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի հոդված 28-ի 1-ին կետը, հոդված 31-ը, «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Կանոնադրության 14.17.25 կետը, Պալատի անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման կարգի 8.7 կետը, ինչպես նաև Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի 31.08.2026թ. N 14 արձանագրությունը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. «Երևան աուդիտ կոնսալտ» ՓԲԸ (ՀԳԳՀ 1 21 0473) 2026թ. օգոստոսի 26-ի որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման արդյունքում տալ 3 «երեք» գնահատական և որպես կարգապահական պատասխանատվության միջոց՝ սահմանել 500 000 ՀՀ դրամ տուգանք:

2. Հանձնարարել «Երևան աուդիտ կոնսալտ» ՓԲԸ որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման հաշվետվությամբ արձանագրված խախտումների և թերությունների շտկման գործողությունների և այդ գործողությունների ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված ժամկետում տրամադրել Պալատի գործադիր տնօրինությանը:

3. Հանձնարարել Պալատի գործադիր տնօրինությանը արտաքին գնահատման գլխավոր վերահսկողի մասնակցությամբ իրականացնել արձանագրված խախտումների և թերությունների շտկման մշտադիտարկում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման օրվան հաջորդող տասներորդ աշխատանքային օրվանից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**